

# 4

# Բնություն

## Աշակերտի զիրք

### ՄԱՍ II

Մայա Բլիաձե • Ռուսուդան Ախվեղիանի



Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության  
կողմից 2018 թվականին:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4

## ՃԱՐԺՈՒՄ ԵՎ ԱՐՎԳՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| 32. Ինչ է շարժումը .....                 | 5  |
| 33. Ինչու են շարժվում մարմինները .....   | 7  |
| 34. Ինչ է ուժը .....                     | 11 |
| 35. Ինչպիսի ուժեր գոյություն ունեն ..... | 14 |

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ԱՆՑԿԱՑՐՈՒՄ Ինչպես է ազդում երկրի ձգողականության ուժը առարկաների վրա..... | 17 |
|--|----|

5

## ՕՐԳԱՆԻՉՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

|  |    |
|--|----|
| 36. Օրգանիզմների աճ-զարգացում և բազմացում .....                | 20 |
| 37. Փշատերև բույսերի կենսական բոլորաշրջանը .....               | 22 |
| 38. Ծաղկավոր բույսերի կենսական բոլորաշրջանը .....              | 24 |
| 39. Սիջատների եռափուլ կենսական բոլորաշրջանը .....              | 28 |
| 40. Սիջատների քառափուլ կենսական բոլորաշրջանը .....             | 30 |
| 41. Երկկենցաղների կենսական բոլորաշրջանը .....                  | 32 |
| 42. Սողունների և թռչունների կենսական բոլորաշրջանը .....        | 34 |
| 43. Կաթնասունների կենսական բոլորաշրջանը .....                  | 36 |
| ԱԱԽԱԳԻԾ. Զվից թռչնի դուրս գալու համար անհրաժեշտ ժամանակը ..... | 38 |

|               |    |
|---------------|----|
| Բառարան ..... | 41 |
|---------------|----|

|                |    |
|----------------|----|
| Հավելված ..... | 47 |
|----------------|----|

# 4

## ԳԼՈՒԽ

# ՃԱՐԺՈՒՄ ԵՎ ՈՒԺԵՐ



### ԱՅՍՏԵՂ ԿԻՄԱՆՑԱՅ.

- Ինչ է շարժումը:
- Որոնք են շարժման տեսակները:
- Ինչպես և ինչու են շարժվում:
- Ինչն է օգնում շարժվելուն:
- Ինչ ազդեցություն է ունենում ուժի գործողությունը մարմնի շարժման վրա:

### ԿԿԱՐՈՂԱՆՑԱՅ.

- Դիտարկել և տարրերել մարմնի շարժումը:
- Նկարագրել շարժման տեսակները և դրանց բնութագրիչները:
- Անցկացնել փորձեր և որոշել, թե ինչն է առաջացնում շարժում:
- Իրարից տարրերել շփվելով և հեռավորության վրա գործող ուժերը:

## Ի՞ՆՉ Է ՇԱՐԺՈՒՄԸ

Շարժման հանդիպում ենք բնույթյան մեջ, առօրյա կյանքում. շարժվում են մարդիկ և կենդանիները, մոլորակները և աստղերը, ծովի ալիքները և գետի ջուրը, մեքենաները և այլն:




Դիտի՞ր նկարները, ըստ քեզ,  
ի՞նչ ընդհանրություն ունեն  
նրանք:

Նկարագրի՞ր՝ ինչպիսի՞  
շարժում են կատարում  
նկարի վրա պատկերված  
մարմինները:



Շարժվում է և կենդանին, և անկենդանը: Մարմինները կարող են շարժվել ամենուր՝ ցամաքում, ջրում և օդում: Ավելին, նաև ջրի և ցամաքի մակերևույթի տակ, բայց դրանց շարժումը տարրեր միշավայրերում տարրեր տեսակի է: Որոշ մարմիններ արագ են շարժվում, մյուսները՝ դանդաղ:

**Շարժումը** մարմնի դիրքի փոփոխությունն է ցանկացած այլ մարմնի նկատմամբ: Շարժմանը բնորոշ են արագությունն ու ուդղությունը:





Արագությունն ու արագացումը տարբերվում են իրարից: **Արագությունը** շարժման տևման է, այսինքն՝ արագությունն արտահայտում է, թե որքան արագ է շարժվում մարմինը: Իսկ **արագացումը** մարմնի արագության փոփոխման արագությունն է ժամանակի ընթացքում, թե որքան արագ կհասնես դու կրնկեատ վայր: Եթե դու ուղղությունն այնպես փոխենս, որ չնվազեցնես շարժման տեմպը, կփոխվի քն արագությունը, բայց արագացումը կմնա նույնը:

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ❶ Գրի՛ առ քո շուրջն առկա մարմինները: Այն մարմինները, որոնք շարժվում են, նշի՛ր «+»-ով, իսկ որոնք անշարժ են՝ «->»-ով:
- ❷ Այուսակի մեջ գրի՛ր ցամաքում, ջրում և օդում շարժվող մարմինները:

| ՑԱՄԱՔ        | ՋՌՈՒՄ | ՕԴ |
|--------------|-------|----|
| <i>ՀԱՌԻԾ</i> |       |    |

- ❸ Նկարագրի՛ր՝ ինչպէ՞ս են շարժվում նկարներում պատկերված մարմինները: Դրանք դասավորի՛ր՝ ըստ շարժման արագացման. ամենդանդաղ շարժվողից դեպի ամենաարագ շարժվողը:



## ՄՏԱԾԵՐ

Հեծանվորդը և մեքենայի վարորդը զնում են միևնույն քաղաք: Ըստ քեզ, ո՞րն ավելի արագ կհասնի նշանակման վայր: Բացատրի՛ր քն պատասխանը:



# ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՇԱՐԺՎՈՒՄ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ 1



**Անհրաժեշտ նյութ.** գիրք, սեղան:

**Ընթացքը.**

Գիրքը դիմ սեղանի վրա, ճայիր և պատասխանի ր հարցերին.

ա) Ըստ քեզ, կարո՞ղ է արդյոք գիրքն ինքնին փոխել իր դիրքը:

բ) Ի՞նչ եղանակով կփոխեիր գրքի դիրքը:

գ) Կատարի՛ր եղահանգում:

Նայի՛ր քո շուրջը. որոշ մարմիններ շարժվում են, իսկ որոշ մարմիններ՝ ոչ: Այն մարմինը, որը չի շարժվում, **անշարժ** է: Այն որոշակի վիճակ և տեղ ունի: Իսկ **շարժվող** մարմինների դիրքը փոփոխական է: Նրանք որոշ ժամանակ մի տեղում են գտնվում, իսկ մեկ այլ ժամանակ՝ այլ տեղում, այսինքն՝ տեղափոխվում են:



1



2

Նկարագրի՛ր նկարները՝ ո՞ր մարմինն է շարժվող, ո՞րը՝ անշարժ: Ինչ գործողություն է անհրաժեշտ կատարել, որպեսզի անշարժ մարմինը սկսի շարժվել:



3



4



Որպեսզի մարմինը շարժվի, անհրաժեշտ է, որ նրա վրա այլ մարմին ներգործի: Մենք հաճախ շարժման մեջ ենք դնում տարրեր մարմիններ: Մարմինը ձգելը, հրելը կամ դրան հարվածելը միշտ առաջացնում է այս մարմինների դիրքի փոփոխություն, այսինքն՝ շարժում: Նրանք սկսում են շարժվել, որովհետև ուժով ներգործել ենք նրանց վրա: Մարմնի տեղից շարժվելը, արագացման կամ ուղղության փոփոխությունը, ինչպես նաև դրանց կանգնելը առաջանում է այդ մարմինների վրա ուժի ներգործությամբ:

Եթե ցանկանում ես ավելին իմանալ, թե ինչո՞ւ են շարժվում մարմինները, դիտի՛ր տեսաֆիլմը.

<https://www.youtube.com/watch?v=rfeVNL7d9U>

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1** Դիտի՛ր նկարները և դրանք խմբավորի՛ր՝ ըստ շարժումի հարուցող պատճառների: Աղյուսակի առաջին սյունակում գրի՛ր այն մարմինները, որոնց շարժման համար անհրաժեշտ է հրում, երկրորդ սյունակում՝ այն մարմինները, որոնք անհրաժեշտ է ձգել, և երրորդում՝ երթ երկուսն էլ միաժամանակ է անհրաժեշտ:

| ՀՐԵԼ         | ԶԳԵԼ | ԵՐԿՈՒՄ<br>ՍԻԿԾԻՆ |
|--------------|------|------------------|
| <i>ՆՄՈՒԾ</i> |      |                  |



**2** Արտագծի՛ր աղյուսակը և ստորև տրված բառերը տեղադրի՛ր աղյուսակի համապատասխան վանդակում:

|         |            |       |            |       |              |     |              |
|---------|------------|-------|------------|-------|--------------|-----|--------------|
| Հեծանիվ | Հողմաղաց   | Արձիվ | Առազատանավ | Եղնիկ | Մայիսան բղեղ |     |              |
| Ջրաղաց  | Ավտոմեքենա | Տաշեղ | Ձեռնասալիկ | Դրոշ  | Խիթեռ        | Նավ | Ծառի հյուղեր |

| ՄԱՐԴՆ Է<br>ՇԱՐԺՈՒՄ | ԶՈՒԲՆ Է<br>ՇԱՐԺՈՒՄ | ՔԱՄԻՆ Է<br>ՇԱՐԺՈՒՄ | ԻՆՔՆԻՆ Է<br>ՇԱՐԺՎՈՒՄ |
|--------------------|--------------------|--------------------|----------------------|
| <i>ՆՄՈՒԾ</i>       |                    |                    |                      |

### ԳՈՐԾՆԱԿԱՆ 2

Դիտարկման համար ընտրի՛ր մի քանի մարմին և փորձիր շարժել դրանք: Արտագծի՛ր աղյուսակը և գրի՛ր դրանց սկզբնական վիճակը, քո գործողությունը և արդյունքը:

| ՄԱՐՄԻՆ       | ՆԱԽՆԱԿԱՆ<br>ՎԻՃԱԿԸ | ԻՄ<br>ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | ԱՐԴՅՈՒՆՔԸ |
|--------------|--------------------|----------------------|-----------|
| <i>ՆՄՈՒԾ</i> |                    |                      |           |

### ՆԱԽՆԱԿԱՆ

Փորձիր պատրաստել մեքենա, զնացք կամ նավի պարզ մոդել, որը կկարողանա շարժվել հրելու, ռետինի կամ զապանակի ազդեցությամբ: Տեսրի մեջ արտագծի՛ր աղյուսակը և նշի՛ր քո աշխատանքի փուլերը: Նկարագրի՛ր, թե ինչ դժվարությունների հանդիպեցիր և ինչպես հաղթահարեցիր դրանք:

| ԱՇԽԱՏԱՆՔԻ<br>ՓՈՒԼԵՐԸ | ԱՌԱՋԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԼՐԴՄԱՆ<br>ՈՒԳԻՒՆԵՐԸ |
|----------------------|-------------------|---------------------|
| <i>ՆՄՈՒԾ</i>         |                   |                     |

## ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵՐ

### ԾԱՐԺՈՒՄԸ ԹԵՇ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Անհրաժեշտ նյութ.

N1 փորձի համար - տախտակի կտոր կամ հաստ ստվարաթուղթ, 3-4 հատ հաստափոր գիրք, տարրեր առարկաներ՝ ուստին, գրչատուփ, թղթի ամրուցիչ, լուցկու տուփ, քար, փոքրիկ գնդակ, խաղալիք մեքենա:

N2 փորձի համար - 60 սմ երկարության պարան, քանոն կամ մետր, երկար էլաստիկ բինտ, 10 հատ կլոր մատիտ, գրիչ:

#### Ընթացքը.


Արտահայտի՛ր ենթադրություն՝ ե՞րբ է ավելի հեշտ որևէ առարկա տեղափոխել՝ երբ այն ուղիղ մակերևույթի վրա ես շարժում, թե՛ թե՛ հարթության վրա: Ենթադրությունը ստուգելու համար, կատարի՛ր փորձեր:

#### Փորձ N1

ա) Մեկ առ մեկ վերցրո՛ւ տարրեր առարկաներ և նատարանի մակերևույթին կամ հատակի վրա շարժի՛ր դրանք: Դիտարկի՛ր, թե ինչպես են շարժվում, նկարազրի՛ր, թե ինչ գործողություններ կատարեցիր դրանք շարժելու համար: Որ՝ առարկան է ավելի հեշտ և հեռու տեղափոխվում: Փորձի արդյունքները գրանցի՛ր աղյուսակի մեջ:

բ) Սի զիրք դի՛ր սեղանի վրա և տախտակի կամ ստվարաթղթի միջոցով պատրաստի՛ր թեր հարթություն: Այնուհետև այս թեր հարթության վրա դի՛ր տարրեր առարկաներ առանձին-առանձին և դիտարկի՛ր դրանց շարժումը: Դիտարկման արդյունքները գրանցի՛ր աղյուսակի մեջ:

գ) Սի քանի զիրք դի՛ր իրար վրա և մեծացրո՛ւ թերությունը: Կրկնի՛ր նույն փորձը և արդյունքները կրկին գրանցի՛ր աղյուսակի մեջ:




| ՄԱՐՄԻՆ         | ՈՐ ՄԱՐՄԻՆՆ Է ՀԵՏՏ ԾԱՐԺՎՈՒՄ   |                                  |                                |
|----------------|------------------------------|----------------------------------|--------------------------------|
|                | ՈՐԴԻՊ<br>ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ<br>ՎՐԱ | ՄԻ ՓՈՋՔ ԹԵՇ<br>ՀԱՐԹՈՒԹՅԱՆ<br>ՎՐԱ | ԱՎԵԼԻ ԹԵՇ<br>ՀԱՐԹՈՒԹՅԱՆ<br>ՎՐԱ |
| Ուստին         |                              |                                  |                                |
| Թղթի ամրուցիչ  |                              |                                  |                                |
| Լուցկու տուփ   |                              |                                  |                                |
| Քար            |                              |                                  |                                |
| Գնդակ          |                              |                                  |                                |
| Խաղալիք մեքենա |                              |                                  |                                |
| Գրչատուփ       |                              |                                  |                                |

ԵՄՈՒՇ

## ԿԱՏԱՐԵՌ ՓՈՐՁ 2

### Փորձ N2

- ա) Գիրքը դի՛ք նստարանի մեջտեղում: Այն փաթաթի՛ր պարանով, իսկ պարանից կապի՛ր էլաստիկ բինտ, որի երկարությունը նախօրոք չափել ես քանոնով: Զգի՛ր գիրքը բինտով և քանոնի միջոցով կրկին չափի՛ր բինտի երկարությունը: Որոշի՛ր քանի սանտիմետրով է ձգվել բինտը:
- բ) Գրքերի տակ դի՛ք 10 հատ մատիտ և կրկնի՛ր նույն փորձը:



Գրի՛ առ տվյալները, համեմատի՛ր դրանք և պատասխանի՛ր հարցերին.

- Ե՞րբ էր ավելի հեշտ տեղափոխել գրքերը:
- Ի՞նչը նպաստեց գրքերն ավելի հեշտ տեղափոխելուն:
- Ըստ ձեզ, մատիտները գրքերի տակ դնելուց հետո ամեց, թե՛ նվազեց ձգելու ուժը:
- Ինչպե՞ս կշափեք այն ուժերը, որոնք անհրաժեշտ են գրքերը ուղիղ մակերևույթի վրա և մատիտների կիրառմամբ տեղափոխելու համար:

Կատարի՛ր եզրահանգում ե՞րբ է ավելի հեշտ շարժելը և ինչո՞ւ:

## ԻՆՉ Է ՈՒԺԸ

Դու արդեն զիտես, որ մարմիններն ինքնին չեն կարող սկսել շարժվել: Դրանց վրա պետք է ազդի ուրիշ, օրինակ, հրող կամ ձգող ուժ: Եթե որևէ բան շարժելու համար ձգում ես կամ հրում, դու ուժ ես գործադրում:

Աշխարհում զոյություն ունեցած բոլոր մարմինները միմյանց վրա ներգործում են, այսինքն՝ մարմինները փոխազդում են: Օրինակ, եթե մեր ձեռքն ենք վերցնում որևէ առարկա, մենք ներգործում ենք դրա վրա: Փորձի՛ր գիրքը շարժել սեղանի մակերևույթի վրա: Դա կարողանաւ անել միայն ձգելով կամ հրելով, ինչի հետևանքով գիրքը կշարժվի, այսինքն՝ կիդիսի նրա արագությունը:

Ուժերը ազդում են ամենուր և միշտ: Ուժը սեղմում է մարմնին և մղում ինչ-որ բան կատարելու: **Ուժ** ասելով նկատի ունենք մի մարմնի ներգործությունը մյուսի վրա:

Ուժը կարող է շարժվող մարմնի ուղղությունը փոխել, շարժման մեջ դնել, կանգնեցնել, արագացնել, դանդաղեցնել կամ շրջանագծով պտտել մարմինը: Ուժը կարող է նաև ձգել, սեղմել կամ կրել մարմինը: Երբեմն ուժն այնքան հզոր է, որ կարող է ոչնչացնել մեզ, երբեմն էլ՝ այնքան թույլ, որ ոչ էլ զգում ենք:


Ուժի աղբյուրները բազմազան են: Օրինակ, մեքենան այդ նպատակով շարժիչ ունի և այլն:

Ինչպե՞ս իմանանք, որ ուժը ազդում է մարմնի վրա:

Ուժի ներգործության դրսևորումներ են մարմինը շարժելը, մարմնի շարժումը դանդաղեցնելը, արագացնելը կամ կանգնեցնելը, մարմնի շարժման ուղղությունը փոխելը, մարմնի ձևի և չափի փոփոխությունը:



Երեխաները մրցում են պարանը ձգելու մեջ: Հստ քեզ, ո՞ր թիմը կհաղթի և ինչո՞ւ:



Տղան տանում է գրքեր, այսինքն՝ նա որոշակի ուժ է գործադրում դրանք բռնելու համար:

Արագության փոփոխություն



Ծարժման փոփոխություն



Ուժի ներգործության  
որոշ տեսանելի  
դրսևորումներ

Մարմնի ձևի փոփոխություն



Մարմնի չափի փոփոխություն



Ուժերը ներգործում են նաև անշարժ մարմինների վրա:  
Այս դեպքում դրանք հավասարակշռում են իրար:



Ուժերը մշտապես ներգործում են առարկաների վրա, նույնիսկ  
այն ժամանակ, երբ առարկաներն անշարժ կանգնած են: Ծենքի  
բոլոր մասերը՝ հատակը, առաստաղը, պատերը սեղմում են և  
պահում իրար: Այս ուժերը ճշգրտորեն հավասարակշռված են:  
Այս ժամանակ մարմինը պահպանում է հավասարակշռությունը՝  
չի շարժվում ոչ մի ուղղությամբ: Եթե այսպես չիներ, շենքի  
մասերից մեկնումեկը կշարժվեր, և շենքը կփլուզվեր:

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1** Բացատրի՛ր քո բառերով՝ ի՞նչ է ուժը:
- 2** Դիտարկի՛ր նկարները.
  - ա) Ինչպե՞ս կարող ես ապացուցել, որ ուժը ներգործում է:
  - բ) Ո՞ր դեպքում է ուժն ավել և ինչո՞ւ:
- 3** Ինչպե՞ս կապացուցես, որ այս դեպքում տարբեր ուժեր են դրսւորվում:
- 4** Բե՛ր օրինակ, երբ որևէ մարմին շարժելու համար քեզ անհրաժեշտ է եղել ուժ գործադրել:
- 5** Հիշի՛ր դեպքեր, երբ դու ինքդ ես նկատել ուժի ներգործության դրսւորումներ:

### ԳՈՐԾՆԱԿԱՆ


Փորձի՛ր ինքնուրույն կողքի քաշել նստարանը կամ պահարանը: Այնուհետև փորձեք դա անել մի քանի աշակերտ միասին և պատասխանե՛ք հարցերին.

ա) Ինչո՞ւ տեղափոխվեցին նստարանը և պահարանը:

բ) Ե՞րբ եր նստարանը կամ պահարանը շարժելն ավելի հեշտ և ինչո՞ւ:




գ) Ըստ քեզ, ի՞նչ տեղի կունենար, եթե նստարանը կամ պահարանը տարբեր կողմերից հրեիք:



# ԻՆՉՊԻՍԻ ՈՒԺԵՐ

## ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ




Մագնիսը մարմին է, որը ձգում է երկաթից պատրաստած մարմինները: Մագնիսի և երկաթյա քորոցների միջև մագնիսական ուժ գոյություն ունի: Ճիշտ այս ուժն է մագնիսին դրանք օդ բարձրացնելու հնարավորություն տալիս:

Մեր շրջապատում բազմաթիվ մարմիններ կան, որոնք ազդում են միմյանց վրա: Ուժ գործադրելով մենք շարժում, բարձրացնում ենք այս կամ այն առարկան:

Ուժերը մարմինների վրա տարրեր կերպ են ներգործում: Երբեմն կարող ենք տեսնել, թե որ մարմնի ազդեցությունն է առաջացնում ուժ (օրինակ, ոտքը, որը խփում է գնդակին), իսկ երբեմն այն անտեսանելի է (օրինակ, մագնիսականությունը և ձգողականությունը):

Որոշ ուժերի ներգործման ժամանակ, օրինակ, հրելիս կամ ձգելիս, փոխազդող մարմինները իրար հպվում են անմիջականորեն: Այսպիսի ուժերը կոչվում են շփման ուժեր: Իսկ որոշ ուժեր հեռավորության վրա, առանց շփման, հեռահար են ներգործում: Օրինակ, մագնիսի և երկաթի ձգողականության ուժը:

### ՇՓՄԱՆ ՈՒԺԵՐ ԵՎ ՈՉ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՈՒԺԵՐ



Այն ուժը, որը առարկաներին ստիպում է վայր ընկնել, կոչվում է **ձգողության** կամ **գրավիտացիայի** ուժ: **Տիեզերական ձգողության** (գրավիտացիոն) ուժն այն ուժն է, որով տիեզերքում առկա բոլոր մարմինները ձգում են իրար: Ձգողականությունը միայն այն ժամանակ է նկատելի, եթե մարմիններից մեկն անհամեմատ մեծ է մյուսից: Օրինակ, եենց ձգողականության ուժի շնորհիվ են շարժվում Երկիր մոլորակը և մյուս մոլորակները Արեգակի շուրջ, Լուսինը՝ Երկրի շուրջ և այն:


Երկու մարմինների միջև ձգողականության ուժի մեծությունը կախված է այս մարմինների զանգվածից և դրանց միջև եղած հեռավորությունից: Որքան ավել է մարմնի զանգվածը, այնքան ավել է նրա ձգողականության ուժը:



Այս գնդակները ձգում են իրար, սակայն, քանի որ դրանց զանգվածները փոքր են, ձգողականության ուժը թույլ է և աննկատ:



Մոլորակները Արեգակի շուրջ են պտտվում, իսկ Լուսինը՝ Երկրի շուրջ: Սա ձգողականության ուժի հետևանք է:



Օդ նետած ցանկացած մարմին ներքև է ընկնում, քանի որ Երկիրը նրան ձգում է **ձգողության ուժով**: Երկրի մակերևույթի վրա կամ նրա մոտակայքում այս ուժը **ծանրության ուժ** է կոչվում: Ծանրության ուժը ձգողության ուժի դրսերում է: Սա այն ուժն է, որով Երկիրը ձգում է մարմինները:



Ձգողության կամ գրավիտացիոն ուժի ազդեցությամբ մարմինները գետին են ընկնում, եթե դրանք ձեռքից բաց ենք թռինում: